

աստուածարանիցն բանք, և սրբազանից
 հարցն 'ի նոսին աշխատասիրարար տեսու-
 թիւնք. ուստի և մեզ յատենարանական
 սպասաւորութիւն հասնալ, բազում էին
 բանք և դժուարագատումք: Այլ այժմ այ-
 սոքիկ բաւականք լեցին, զիս յաճախագոյնն
 այլոյ թողլով տեղոյ և ժամանակի, մանա-
 ւանդ բարձրագունիցն յիմաստ քան զմեզ:
 Աւ մեք խաւսեացուք յազազս այլ իմն խոր-
 հըրդածութեան, յոր ժամանեալ բարեպաշ-
 տարար միահամուռ ժողովեցաք, որ է այս,
 զի յաւուրս յայտնութեան անմահ և երկ-
 նաւոր թագաւորին մերոյ Յիսուսի Վրիս-
 տոսի եհաս մերս սրբազանի այս ժողովոյ՝ և
 Աստուածային լուծեան սրբոյ Ակեղեցւոյ
 զառ 'ի քաջ և բարեպաշտ արմատոց բխեալ
 գաւազանն և զբոյս բարեպաշտութեան,
 զպատկաւորս Աւոն եղաղխեալ և ընծայել
 'ի թագաւորութիւն՝ տանս Կորդոնայ ազ-
 զիս Հայաստանեաց, որով յայս ժամանեալ
 մեր, բեր փոքր ինչ յազազս թագաւորու-
 թեան խաւսեացուք յԱստուածաշունչ զբոց:
 Ասիս առաջին քննելով, թէ՛ զե՞նչ է թա-
 գաւորութիւն, և սպա թէ՛ ո՞վ է առաջին
 թագաւոր, և երրորդ թէ՛ յորմէ՞ հետէ, և
 կամ զինորդ սկսաւ թագաւորութիւն 'ի
 հարդիկ. և չորրորդ թէ՛ զե՞նչ են կարգ և
 իրաւունք թագաւորի:

ՍԱՀՄԱՆ ԹԱԳԱՎՈՐԻ: Թագաւորութիւն է
 ըստ ուղիղ բանին՝ 'ի վերայ աշխարհի՝ որ
 իւր է վիճակեալ, և 'ի նմա բնակիւոցն իշ-
 խեալ, արդարացի հարկս և իրաւունս 'ի նո-
 ցանէ առնուլ, և զնոսին 'ի հաստատութիւն
 պահել. արտաքին թշնամեացն՝ քաջու-
 թեամբ պատերազմեալ՝ յաղթել, և կամ
 հաշտութեան հնարիւք զխաղաղութիւն ող-
 ջունել. և զամենայն ինքեան հնազանդեալան
 առանց իրիք պատճառի յաւրէնս և յիրա-

ւունս անլուծանելի ունել. բարեգործացն
 զովութիւնս և պատիւս շնորհել, և չար-
 եացն և որք արտաքոյ աւրինացն արշաւի-
 ցին, տանջանս և պատիժս հատուցանել.
 ոչ երեկլ 'ի փառաւքն բարձրամոխլ, այլ
 սպասաւոր Աստուծոյ թագաւորութեանն
 զինքն կարծել, ըստ Սողոմոնի թէ՛՝ Աւու-
 րութեք թագաւորք, զի սպասաւոր էք Աստու-
 ծոյ թագաւորութեանն՝: Աւ զխաւսորելով
 ասացուք. թագաւորութիւն է՝ որոյ իշխէ
 զբազումն և զբաժանեալն՝ ըստ անձանց
 և ըստ արուեստից, նաև ըստ բարուց, և թէ
 զէ՛ս լեցի՝ ըստ կրօնից բարեպաշտութեամբ,
 իմաստութեամբ, 'ի խաղաղութիւն և 'ի բա-
 րեկարգութիւն նուաճել: Աւ այս է սահ-
 ման թագաւորի: Յետ այսորիկ ինդրել է,
 թէ՛ ո՞վ է առաջին թագաւոր:

(Ճարուցակիլ):

ԱՂԵՐՍ ԱՌՏԷՐ

Ամենակարոյ Տէր իմ եւ Աստուած,
 Հայեանց յիս, որ եմ մեռին քո հաստուած
 Տարբանիւթ զոյիս դու պսակ փառաց,
 Յուսով ակնկալ հանդերձեալ կենաց.
 Առ բեղ սպաստան մնամ միշտ կանխեալ,
 եւ զբոյղ քղանցից ցանդ բուռն հարեալ.
 Տէր իմ յիս զման եւ ինձ ողորմես:)
 Բան Հօր ծածկագէտ, ծածուկ յիս ազդու,
 Զի ես մտաղիւր փոյթ յանձին կալայ,
 Զիմ լոմայանուէր զընծայս ի սեղան
 Հանել կամակար վեհիղ սրբութեան.
 Բարեյոյս գտեալ զքանարարս ի արտի
 Գրոշմեղ մատամբոյ յայս Թերթ քարտնի:

*) Այս տողը պէտք է կրկնել իւրաքանչիւր ասն
 վերջումը:

Գեղարանձ նշան, Հողի մեծութեան,
Հաւասար Որդոյ եւ Հօր տէրութեան,
Մեծահրաշ գործոց գործակից բարի,
Ահաւոր, անճառ ըստ ամենայնի:

Ի ստորաբարձ միտս զխորհուրդ սխարլի
Առբեղմնաւորեն ըստ եօթանցն կարգի:

Գիւրաթառամ չարս անցաւոր կենաց,
Բարուրեն զանձն իմ ի կեանսն անանց.
Խաչակրօն վարուք մարդեան զիս յերկիւղ,
Սիրով քո տոկալ յանձուկ յայս իմ խուղ.
Երկնայնոց խոկմամբ վառեալ յապտերոց,
Ընդ համակ հոգոց դասուց երջանկաց:

Եռանձնեայ յուսով քո ամենալոյս
Ձիս յուսաւորեն, ո՛վ բարի Յիսուս.

Հաւատոյ ակամբ վեհասքանչ շնորհաց
Լինիլ արժանի վեհիդ պարզեւաց.

Որով եւ անձին բերել գործ բարի,

Գոյ չարչարակից Խաչիդ վիճակի:

Չարամուր չարին վանենս զխոզիկն,
Չղետնենս ուժգին զախոյեան նորին.
Առաթուր կոխեն, Տէր իմ, զգաղտամարտ,

Չնա ամէն իրօք տուր աստէն յազարդ.

Չի ինձ ի սմին յանեղ հանդիսին

Հասցէ դօրութիւնդ Սուրբ Քառաթեւէին:

Էապէս Փրկիչ, Ծնունդ Հօր անճառ,
Փրկեան մտախափ ի կարծեացս իսպառ.
Երազ են այս կեանք, վշտօք առ լցեալ,
Աչք, սկանչ, բերանս սուրբ ուխտիս զրժեալ,
Միտք, սիրտ եւ խորհուրդս տյնպէս ուխտադրուժ,
Չեռք, ոտք, եւ ընթացք չունին բնաւ ոյժ:

Ընկալ զոր հայցեմ գետնամած զիմօք,
Հառաչմամբ սրտիս անյազ արտասուօք.
Ո՛վ Տէր մեծութեան, դու գրեղ փրկանակ
Ետուր աշխարհի բազմաց փոխանակ.

Թէ ոչ դատապարտ անդէն իսկ եղեալ,
Յանել ի բանտի ի մետաղս պնդեալ:

Թո՛ղ զիս ի մոխիր, ի հիւլէս մաշիլ,
Միայն զարթմնի ի շնորհացդ պահիլ.
Հարուած մարդկային մահուամբ վճարի,
Մոլար վարտուղին անդիոց մատնի.

Ապաքէն կացո՛, Տէր իմ Թապաւոր,
Հովանի զխոյս աջ քո զօրաւոր:

Ճուժել կապանաց ներքին զժոխոց
Տղմասիդ զբոյն Թունաւոր զեռնոց,

Չարաչար դիւաց, մղեգնեալ խմբից
Եւ առհասարակ իժից եւ քարբից,
Մի տար ինձ տեղի անդէն գտանիլ,
Նոցունց հարուածոց տօկալ եւ տանիլ:

Ի յայս իմ աղէտս ի տառապանաց
Հայեաց ի բարձանց, ի գուժ, Տէր, շարժանց.
Բարերար Աստուած, քաղցր քո տեսլամբ
Արնդ հաս առ իս զգալի աղոյճամբ,
Որպէս բաբելեան ի հուր հնացին
Պահեցեր զմանկունս ի տես արքային:

Լուծեալ անդամօք ծնդեցեալ գերիս,
Աստէն պաշարեալ մեղօք տազնապիս
Չիք նշոյլ յուսոյ չիք բժիշկ յուսոյ
Տէր իմ Յիսուս բաց ի բէն միայնոյ,
Համեաց հաշտ սիրով զբոյր սպեղանի
Գնել խոյուածոյս, որում կարօտի:

Խոտացայ անդէն կրել զիսաչ ի յուս,
Որով զօրանայր ոյժ եւ կար հոգւոյս.
Բայց զի խօթութիւնք կամաց եւ կրից
Արցել զիս իսպառ յոգեշահ օգտից.

Ապաքէն ի քեզ եմ ապաստանեալ
Ծնունդ հօր անճառ վանս իմ մարդ եղեալ:

Ծամածուռ զիմօք իբր շուն շնձէ,
Թշնամին հոգւոյս զինքն յայլ կերպ կեղծէ,
Բիւր Թուին պատրանք բիւր նորին զիմակ,
Եւ բիւր մոլութիւնք վեհիդ հակառակ.

Հաւաստեաւ միակ կարօղ ուժնդակ,
Չերծո՛ ապատենս զհոգիս վտարակ.

Կամաւ զորշմես խաչանիշ նշան
Ի ճակատ սեմոցս հովանի պաշտպան.
Չառնել մուտ ընդ այն մահացու դժնեայն
Որսալ ի ծուղակ ցաւոց անպայման.

Այլ կացցէ յանարդ որսորդն զածան,
Հեռի առ յինէն որպէս ապաջան:

Հարեալ ի խղճէ իջեալ ընդ անդունդս,
Ճեպեալ ի զննել գոտի սեւադունդս,
Բիւրք բիւրուց ճիւղադք հրէշք ալլանդակ
Բիւրուց արուեստից մոլար սուրհանդակ.
Ապաքէն յիշենս զքո պատկեր բարւոյդ,
Եւ ամրափակեան զիմաց յահուելոյդ.

Չմուան շուրջ փակեալ, բքաբեր հողմունք
Յառնին սաստկազին, զուշակին մահունք.
Չարթո՛ հէք Թժրեալս քեւ սառսպարիլ,
Մի յեղակարծում ինձ բնդհարկանիլ.

Ձի քո զօրութիւն եւ կարողութիւն
է անեղբարակ, անասման, անհուն:

Ղամբար մշտապառ լուսոյ երեւման,
Հաստեան ի սրտիս Հօր ծնունդ եւ բան.
Մի բնաւ սայթարիլ եւ մի զանգիտել
Ի նետից նեղջաց, ի խաւարչուտ ելս,
Ուր սիրտ եւ մարմին եւ ոտք զողովանի
Խամբեալ կիսամեռ, խստիւ հարկանի:

Ճզանց փոխարէն գտայ Թալիացեալ,
Արհաւիրք զինեւ բիւր պարայածեալ,
Յորմէ ահափետ եղէ զլիսովին,
Անկաւ յիս երկիւղ անդնոց վիհին.
Ա՛ղէ ինձ օղնեան ի վերջին բարբառ,
Ո՛ւր արիւոյն տիպար, ճառագայթ անճառ:

Մահուն աղջամուղջ առնէ վիս Թախիծ,
Սիրտ իմ յորսայեալ ի յողբ, ի կսկիծ.
Ձի ժայթրէ փրփուր վիշապն զալարուն
Ինձ հիքացելոյս որպէս մահաճոյն,
Արդ դարձն ինքեան աչօք բարկացայտ,
Ձիւրովին կրել յիւրն ի ծոց ի յայտ.

Յիսուս սուրբ անուն, փառք հրաշից անմահ,
Յելից արեւու մինչ ցմուտս նորա.
Եւ ի հարաւոյ եւ ի հիւսիսոյ
Եմք քեզ միայնոյ միշտ երկրպագու.
Յայս արժանակշիռ զեանախիշտ ցաւոյս
Ձիս ապարինել բժիշկ իմ հոգւոյս:

Նինչ ինձ մի տացես անկանիլ ի վայր,
Թող աստ ճենճերիլ ի քրայս, ո՛ հայր.
Մինչդեռ սուր եւ հուր, խայթոց եւ քերիչ
Կալեալ ի բռան տանջանայ զահիճ,
Մերթ իբր կատաղի առիւծ բորբոքի,
Եւ մերթ անհեճեմ վիշապ երեւի:

Շնչեան բարկութեան շանճք քս սաստկագին
Շտապ ի գլուխ վէս սէղ զոռուլին,
Որ վառ ընդ երկնաւ ջանայ ի ժանիս
Չոհել իւր ըզձից զմիտ, զսիրտ եւ զնոզիս.
Դիր ճեպ ի մակոյլ պնդակապ սարեօք,
Մղեան խոր յանդունդս լուսախոյ զօրօք:

Ո՛չինչ ես մաղթեմ, ո՛չ զահ, մրցանակ,
Ոչ ոսկէքստակ զաւազան եւ Թագ.
Չօրս իսկ հաւաստեալ զիտեմ սրաճեւ
Իբրեւ փայլական անցցէ շուրջ զինեւ,
Այլ անբիծ, անվէր փայլեան գերթ լուսին
Չհոգիս սեւաճոյր ի շող երկնային:

Ձեւ կապանք հանդէպ ինձ մերենայից
Եղեալ յիշխանէն վշտօք Թունայից.

Ձեւ եւս ի բանտի պնդեալ ի մտապս,
Ընկճեալ ի Թակարդ, անդնոց ի խապս,
Յնոց, Տէր իմ, քոյին սիրոյդ զհանդէս,
Հանգչիլ ի ծոց քոյ ազատ ի բանտէս:

Պսակ լուսեղէն լոյս քո փայլական
Պատես զընտրելովքդ ի ցոյց ի նշան,
Թէ քոյինատիպ զրոշմեալ պատկեր
Անվեճեր ունի Թոչիլ ընդ յեճեր.
Ո՛հ, հրաշից Տէր իմ, արդ Հոգւոյդ Թուօք
Տուր ինձ վերանալ Խաչիդ պարծանօք:

Չուր ցանեան յիս, Տէր, քոյդ յաղբերականց,
Չիմ շիջուցանել զխարոյկս տանջանայ.
Եւ նորուն փոխան տպեան խանդ սիրոյ,
Ըստ յուսոյ կենաց ի քէն մարբելոյ.
Ձի քեզ մնայ սիրոս, քեզ գայ ի խնդիր,
Քեւ արդ զօրանայ, քեւ լիցի ընտիր:

Ռահ լուսափայլ սանդուղ Յակովբեան,
Որք խաչակրօն զարմից Յարեճեան.
Իջցէ պատրաստել հրեշտակ քո ճարտար,
Յերկրէ ի յերկինս յուղի անվճար.
Եւ ինձ եղկելոյս ո՛վ տացէ զայն յարկ,
Որ յանձինս կրեցի անթիւ զործ անարդ:

Սուր քո կողամուխ, սուրբ արիւնամած,
Որ արկ զսարսափ բիւրաւոր զահճաց.
Արն զօրավիդ քոց ձեռակերտաց,
Առ քեզ ցանդ ուղղիլ զգործս եւ զընծաց.
Իմ չէն նոր հայցուած փառս յաղթանակի,
Այլ զայն ե՞թ ունիլ գոր Տէրդ իսկ կամի:

Վաղ ընդ փոյթ վախճան, զմնչ օգուտ մարդկան,
Յոր չիք ինչ առի՞թ կենաց դիւրութեան.
Օ՛ն վապեանց, ո՛ այր ալեօք ծերունի,
Սուրբ աւանդապահ, քեզ բիւր երանի.
Աւնդս ինձ կարդն, զի դառն շղթայս
Ըստ զործոց առ ի դեռ ի կեանս յայս:

Տաճարս տապալել ձգտի Թշնամին,
Որ մերթ զնախաստեղծ մարդն առաջին
Ի յորսայս կալեալ քինու վրիժուց,
Յարեաւ ի վերայ ի տարապարտուց.
Օ՛ն անդր ի բաց տար յինէն մարտիկդ,
Հուպ մատո՛ւ առ իս նինչ հանգիստ բազրբիկ:

Բամից լուսազգեսց պարուց պարակցեան,
Երկրաբարձ հոգիս տամար քեզ կազմեան.

Մի կալ ի սրայրար ղիւին ընդ իս խիւտ,
 Այլ կոծով տրնիլ մնալ լուռ ի նիւտ.
 Տնւր թեթեւ վազիւր յամբարայլ ոտիցս
 Տենչիւ սէր Արփուղի ի տունն քո մտից.
 Յօղ քո եւ տարափ առատ յիս ցօղնա՛:
 Մի զոլ պտղագուրկ եւ կալ ի բացիայ.
 Այլ ցորչափ զայս սիւր եմերաց ծծեմ,
 Անգրիկ ձայնիւ ըզրել տէր օրհնեմ.
 Փառք յաւերժ անմահ անուան քում Աստուած,
 Ար տաս կար ձգալի ուժգին իմ մտաց:

Ի իւսեսցէ արդ թաղ ինձ աջ Ամմահին,
 Կապեսցէ անկոյժ ի սէր իւրոյնիս.
 Անմուռնչ կրգիլ զիմ սրտիս զեղուած
 Համայնից հատ ին իբր ի հիւս ծաղկանց.
 Յանձուկ վանդակէս զիս հանն տէր ի վեր,
 Ճախրել բոյղ շքով հիասքանչ յեմեր:

Քառս եւ գոհութուն եւ զաղերս մտացս
 Սիրով քեզ ձօնեմ տէր իմ եւ Աստուած.
 Ձի յայս ասպարէզս իմ չէ բնաւ կար,
 Բամբ լարիցս հնչել ախորժ կամակար.
 Այլ բոյղ անկապուտ եւ սիրոյլ Յաշակ
 Մարդեալ ետ կշռել բառիցս դումարտակ.

Քաւիչ մեղանաց քնար սուրբ Հոգւոյն,
 Հովիւ բաղցրասուլ ինձ անոյշ ի բուն.
 Տուր յառաւօտուս ի տալիլ ի նուազ,
 Սոխակին ըզձայն կրգիլ ի հաղագ.
 Հօրքն Ամմահի, Արդույ Միածնին,
 Հոգւոյն Յշմարտի երից անքննին.
 Տէր իմ յիս գթա՛ւ եւ ինձ ողորմես:

Ե. Գ. Ի. Ա. Ջ. Ա. Բ. Ք. Ե. Պ. Ի. Ս. Կ. Ո. Պ. Ո. Ս.

ՀՈԳԵԼՈՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՀՈԳԵԼՈՐԱԿԱՆՔ ԵՒ ՆՈՅԻՆ ՊԱՐՏԱԼՈՐՈՒԹԻՒՆՔ

- Ո՛չ լուցանեն զճրաղ եւ ղնեն ընդ դրուանսու.:
 - Ար ասէ եւ ոչ ասնէ, փոքր կրչեսցի յարբալուժեան երկնից. (Աւետ.)
 - Յորժամ մատչիս ծառ պել Աստուծոյ, պատրաստես զանձն քո ամենայն փորձութեան.:
- (Սիրար)

Հոգեորականութիւն բառը յատուկ նշանակութեամբ՝ կը պատկանի աշխարհային հոգւմ, եւ դորձքերէ, հրաժարուած այն ան-

ձանց, որք առաքինական բաղձանքներով եւ երկնային սուրբ մտածմունքներով զբաղված եւ առ Աստուած առանձնացած են:

Հոգեորականութեան հետեողները՝ մեր Հայ-ազգի նկատմամբ, զլեւաւորապէս երկքի կարեւր բաժանել, այսինքն՝ ճգնողական, վարդապետական եւ քահանայական:

Ճգնողականը, որ եւ անապատական՝ նօքաւ են, որք միանձնաւոր կենցաղավարութեամբ՝ աստուածային երանութեանց ժառանգութեան խանդակաթ, հետու բողբոջին քաղաքական գործքերէ, եւ զբաղմունքներէ, լրկանց եւ այլից խորշերը, կամ իւրեանց համար յատկացեալ անապատները բնակելով, մինչեւ ի մահ՝ ճգնութեամբ եւ աղօթիւք ժամանակ անցունելով, միմիայն հոգւոյ փրկութեան եւ վերինը խորհելու զբաղած են:

Վարդապետականը որ եւ վանական, թէպէտ եւ ճգնողականի նման է, բայց սա ունի աւաւել զերազանց ու վսեմ պաշտօններ եւ պարտաւորութիւններ. եւ սորա առջեւ ընդարձակ ստապարէզներ բաց են:

Իսկ քահանայականը երկու կերպ պաշտօն եւ զբաղմունքներ ունի, այս է՝ հօգեւոր եւ մարմնաւոր: Բայց սակայն մեզ այժմ հարկ չկայ երկրորդին համար խօսել, հապա՛ հօգեւորին նկատմամբ պէտք է խօսիմք: Ուստի կ'ամփոփեմք մեր խօսքը, եթէ մեր ներկայ յօդուածի մէջ հոգեորականք ասելով՝ պէտք է խմանալ վարդապետական եւ քահանայական դասքը:

Թէպէտ ընդհանուր առմամբ հոգեորական կը կոչեմք մի եւ նոյն նպատակի ծառայող եւ հետեող անձինքը, բայց արժան է զիտել, որ սոքա զանազան մեծ եւ փոքր աստիճանաց եւ դասուց որոշուած են, եւ իւրաքանչիւրը յատկացեալ պաշտօններ եւ սուրաւորութիւններ ունին՝ ի միմեանց բարձր